Ազգ
21 ՅՈՒԼԻՍ 2007 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ

# ՖՐԱՆՍԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ









# ԵՐԵՎԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԸ



Դեսպան Ս. Սմեսովը ելույթի պահին

1880 թվից ի վեր հուլիսի 14-ը՝ Բաստիլի գրավման տարեթիվը, նշվում է որպես Ֆրանսիայի Հանրապետության ազգային տոն: Այդ օրը, այդ տոնին հանդիսավորություն են հաղորդում զինվորական շքերթները, պարահանդեսների եւ հրավառությունների տոնական մթնոլորտը:

Պատմական այդ իրողությունը միայն Ֆրանսիայինը չէ:

Լինելով պատմական կարեւոր շրջադարձ, այն խորհրդանշում է անցումը միապետությունից դեպի հանրապետություն եւ վայելում է համաշխարհային ճանաչում:

Այս տարի եւս, որպես հայ-ֆրանսիական ջերմ բարեկամության վառ արտահայտություն՝ Երեւանի ֆրանսիական դեսպանության ապակեպատ դահլիճում տեղի ունեցան փառաշուք հանդիսություն եւ ընդունելություններ՝ ինչպես Հայաստանի պետական, դիվանագիտական ու կառավարական շրջանակների, այնպես էլ ժողովրդի ականավոր ներկայացուցիչների համար:

Պետական հիմների ունկնդրությունից հետո՝ Փարիզից, Քոչարյան-Սարկոզի նախագահական հանդիպումներից նոր վերադարձած Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Սերժ Սմեսովը, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի, պետական եւ դիվանագիտական շրջանակների, հյուրերի ներկայությամբ հանդես եկավ հայ-ֆրանսիական բարեկամությունն առավել զարգացնելու, տարածաշրջանում խաղաղության ու բարգավաճման կայացման կոչով, որի համար Ֆրանսիան, Եվրոմիության ու միջազգային շրջանակների հետ կարեւոր ջանքեր է գործադրում:

Դեսպան Սերժ Սմեսովը մասնավորապես ասաց.

«Ֆրանսիական հեղափոխությունը նախանշեց խզում նախկին վարչակարգի հետ՝ մարմնավորելով հույսն առ ավելի արդար հասարակարգ: Երեք բառեր՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն, մարմնավորում են այդ իդեալը: Եղբայրություն բառն այսօր ունի ժամանակակից հոմանիշ՝ համերաշխություն, որը լավագույնս է բնորոշում հայ-ֆրանսիական հարաբերությունները:

Այս տարին առանձնահատուկ էր քաղաքական եւ մշակութային առումով՝ նկատի ունենալով ութ ամիսների ընթացքում երկու երկրների նախագահների երեք հանդիպումները եւ Հայաստանի տարին Ֆրանսիայում, իրողություն, որը հնարավորություն տվեց ամրապնդել եւ վերահաստատել բարեկամական խորը կապերը երկու ժողովուրդների միջեւ: Ֆրանսիայում Հայաստանի տարին ավելի քան հինգ հարյուր հազար ֆրանսահայերի համար հնարավորություն դարձավ՝ վերագտնելու սեփական արմատները եւ տասնյակ հազարավոր ֆրանսիացիների, ինչպես նաեւ նրանց օտարերկրյա հյուրերի համար՝ ճանաչելու եւ նորովի բացահայտելու Հայաստանը»:



Ձախից աջ՝ առաջին շարք՝ դեսպան Սերժ Սմեսովը, վարչապետ Սերժ Սարգսյանը, Ուկրաինայի դեսպան Ալեքսանդր Բոժկոն, պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը եւ պատգամավոր Րաֆֆի Հովհաննիսյանը երկու երկրների ազգային հիմների ունկնդրության պահին: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատուն, 14 հուլիսի 2007 թ.



Վարչապետ Սերժ Սարգսյանը ելույթի պահին:

Պատասխան ելույթում վարչապետ Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Ֆրանսիային՝ Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած կարեւոր նեցուկի ու բարեկամության համար, հավաստիացնելով, թե այդ հարաբերությունները ավելի եւս են զարգանալու եւ ամրապնդվելու:

Պաշտոնական արարողությունից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն, իսկ նույն օրվա երեկոյան՝ ելույթներ եւ ընդունելություն ժողովրդի ավելի լայն խավի համար:

Հ. ՄՈՒՍՈՓՅԱՆ,
Երեւան

# «KARCOMAUTO» LTD PEUGEOT






Գլխավոր տնօրեն
Հեռ. (+37410) 24 96 50
Ֆաքս (+37410) 28 03 50
E-mail: Peugeot@ autogroup.am




Հայաստանում Ֆրանսիայի արդյունաբերության խորհրդանիշներից՝ աշխարհահռչակ PEUGEOT-ի ավտոսրահ-ցուցասրահը համարվում է Ֆրանսիայի մի մասնիկը այստեղ...: «Karcomauto» LTD-ն ներկայացնում է Peugeot-ն Հայաստանում 6 տարիներից ի վեր: Այս ժամանակաշրջանում Peugeot-ն, լինելով էլիտար ավտոմեքենա, մեծ ճանաչում է ստացել նաեւ այստեղ: Այս մեքենան ներկրելն ու Հայաստանում վաճառելը համարվում է մեծ պատիվ:

Ֆրանսիական ոճը միշտ տարբերվել է ուրիշ երկրների ոճերից: Այն շատ յուրահատուկ է եւ առանձնապես աչքի ընկնող: Peugeot-ի ցուցասրահը վերանորոգվել ու կառուցվել է որպես ավտոսրահ՝ 3 տարի առաջ: Հայաստանում, ինչպես զարգացող բոլոր երկրներում, մարդիկ արդեն ցանկանում են գնել նոր մեքենա եւ ոչ թե օգտագործվածը, ավելորդ ծախսերից ազատվելու համար: Peugeot-ն փորձում է օգնել հաճախորդին, մանավանդ որ այն հասանելի է բոլոր կարգի եկամուտ ունեցող անձանց: Այսօր, Հայաստանի համար աննախադեպ ակցիա է տեղի ունենում՝ 7 տոկոս կանխավճար, 7 տարի մարման ժամկետով: Այս նախաձեռնությունը բանկերի համար համարվում է ռիսկային, բայց Peugeot-ն շարունակում է զարմացնել բոլորին:

Peugeot-ի տնօրենությունը այս հատուկ թողարկման առիթով մաղթում է, որ տնտեսական, մշակութային, քաղաքական ու բարեկամական հարաբերությունները շարունակեն ավելի եւս զարգանալ Հայաստանի ու Ֆրանսիայի միջեւ, իսկ այդ հարաբերությունների կիզակետում հայտնված ընկերությունը ողջունում է իր հաճախորդներին, որոնց շարքում են նաեւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան անձնակազմի անդամները: *Անվերջ նվաճումներ հայ-ֆրանսիական բազմաշերտ ու բազմատեսակ հարաբերությունների ճանապարհին:*

# Servier

## «Լե Լաբորատուար Սերվիե» ՍԱՍ Ընկ. Հ/Ն

ՀՀ, Երեւան, Փ. Բուզանդի 53-55
դ 2 գրասենյակ
Հեռ.՝ (-37410) 52 02 49
Ֆաքս՝ (-37410) 52 02 81
www.Servier.com
Հայաստանյան ներկայացուցչության Տնօրեն՝
Բագրատ Լալայան, Բ.Գ.Թ.

«Սերվիե» ընկերությունը ստեղծվել է 55 տարի առաջ Ֆրանսիայում, Օրլեան քաղաքում, Ժակ Սերվիեի կողմից, որն ուներ դեղագործական եւ բժշկական կրթություն: Այսօր «Սերվիեն» ամենախոշոր անկախ դեղագործական ընկերությունն է Ֆրանսիայում: Այն ներկայացված է 150 երկրներում եւ ունի 20000 աշխատող, տարեկան շրջանառությունը կազմում է 3 միլիարդ եվրոյից ավելի: «Սերվիե»-ի հիմնական «զբաղմունքը» գիտահետազոտական աշխատանքներն են: Այն ինչ որ ստեղծված է՝ դրանք օրիգինալ դեղամիջոցներ են: Դրա համար 25 տոկոսը շրջանառության՝ «Սերվիեն» տրամադրում է գիտությանը:

Արդեն «Սերվիեն» Հայաստանում է 7 տարի եւ առաջատար տեղ է գրավում նաեւ Հայաստանի դեղագործական շուկայում, հանդիսանալով 3 ամենախոշոր դեղագործական ընկերություններից մեկը: Աշխատողների թիվը հասնում է 15 անձի, որոնք ստանում են լավ աշխատավարձ, հպարտ իրենց աշխատանքով: Ընկերությունը ակտիվ համագործակցում է հայ բժիշկների հետ, կազմակերպելով տասնյակ կոնֆերանսներ, սիմպոզիումներ, հովանավորելով Հայաստանի սրտաբանների ասոցիացիայի ամսագիրը:

«Սերվիեի» օգնությամբ մոտավորապես 20-25 առաջատար բժիշկներ Հայաստանից ամեն տարի մեկնում են մասնակցելու եվրոպական ամենախոշոր կոնգրեսների՝ անընդհատ ինֆորմացիա ապահովելով դեպի Հայաստան:



«Շատ հպարտ եմ, որ ղեկավարում եմ ֆրանսիական ընկերության ներկայացուցչությունը, մանավանդ որ Ֆրանսիան հանդիսանում է մեր գլխավոր գործընկերն ու բարեկամը Եվրոպայում: Շնորհավորում եմ Ֆրանսիայի ժողովրդին՝ Ազգային տոնի կապակցությամբ եւ շնորհակալություն եմ հայտնում այն ամեն ինչի համար, որ նրանք անում են Հայաստանի համար: Իսկ մեր ժողովրդին, որպես բժիշկ առողջություն ու երջանկություն եմ ցանկանում: Հետեւեք ձեր առողջությանը եւ ամեն ինչ լավ կլինի...», ասում է տնօրեն Բագրատ Լալայանը:

